



Եղիշե ԱրքեՊահանջող Տերթերան  
(Եղիվարդ)

**Բ Ա Ր Ի Լ Ո Ւ Ր Ը**

ՅՈԹ ՇԱԲԱԹԻՆԵՐ անցեր էին հայիստեական Վարդապետի խաչելութենեն և հարութենեն ի վեր, սակայն մեծ զոհին հիշատակը դեռ կմնար թարմ հոգիներուն խորը: Աշակերտներն ու հետևորդները ցավեն լնեկնած և հալածվելե գգուշավոր, կմնային ծածկված աշքերե:

Հիսուսի հարութենեն հիսուս օրեր հետո, Երուսաղեմի մեջ կմանդիսավորվեր հունձքերու երախայրիքի տոնը, որուն կլծորդվեր հան օրենքի տվշուրյան հիշատակը:

Հրեատանի բոլոր անկյուններեն եկող ոխտավորները տաճարին ընծա թերեր էին իրենց հունձքերու առաջին պատուները, բեղոցած սայլերու և գրատներու, իսկ զոհվելիք կենացաներու եղջյուրները զարդարեր էին ցույնզգույն հարութերով և ձիթենիի ոստերով: Նվիրաբեր յուրաքանչյուր խոսքը ներս կմտներ պարհապի արևելյան դուռնեն, սրինգներու և ծնծղաներու նվազով և սաղմոններու երգեցողությամբ:

Տաճարին հրապարակը կծփար ոխտավորներու երանգավոր բազմութենեն, որոնք երկյուղածորեն կխոնարհեին սրբարանեն հոսող լուսին՝ և խոնկերու ծովիին ճենաթագուններու բույրով հագեցած, լսելով ար-

ծաթ փողերու ծայնը և սաղմոններու երգեցողությունը բոկոտ Աստացիներուն:

Պետսելուստեի այդ համեստին, զալիքին մեկ անկյունը, իրենց զգուշավոր կերպարանքներով կկենային խոմք մը մարդեր ևս, ոխտավորներու հետաքրքրության առարկա: Իրենց ինքնուրցունը չեր որ կտապավորեր դիտողները, որպիտան Գալիխացիներ էին և ընտանի բոլորին: Ուշագրավը իրենց կեցվածքն էր, որոնք գերազույն զգացումի մը մեջ ընձակար ու պրկված՝ պատզամն մը կտապարված հոն էին եկեր, հագնելյու երկնքի զրությունը, համաձայն իրենց եղած խոստումին: Բոլորը վերացած երկնքին կմայեին, անհոն դողե մը բնված: Բոլորի աշքերուն մեջ՝ բոյսեր և դժմքերուն վրա՝ անտվոր անձկություն մը կար: Անոնք աստերուն հասներու ճրգին մեջ էին կարծես, անշատված ամբողջովին այս աշխարհնեն:

Հետո հանկարծ ուժգին հով մը, բարձունքն մը իշած՝ կեցներ տաճարին հրապարակը, խիս՝ բայց զովաշունչ այիքներով: Ամենքը բարացած՝ երկնքի խոնարհող կանարին կմայեին, որիկե կայծակներ կտեղային վար, լեզուներու ձևով: Տաճարեն

ներս լուծ էին սաղմոսները և բազմությունը զարհուրած, Գալիլիացիներուն կնայեր, որոնք բոցերով շրջապատված կաղոթեն բարձրածալն: Բոլորի մտքին մեջ անգամ մը և կշինվեր հնոց նետվող մանուկներուն պատկերը, Դանիելի գործին մեջ նկարագրված:

Բազմությունը երկյուղալից ակնածանքով տակավ կշատնար Գալիլիացիներու այս խմբակին շուրջը: Գլխավոր խոսողը միջին տարիքով, բարձրահասակ, խիստ ու գորշ մորուքով և մազերով մեկն էր: Ձերմեռանդ իր դեմքը և մանկունակ իր նայվածքը խորապես անկեղծ մարդու մը տպավորությունը կիողուր ամենուն վրա: Խոսողին ձայնը հակառակ իր մեղմ և անարվեստ շեշտին, կհնչեր ներշնչումով և տիրական, տարրեր աշխարհե եկող պատգամավորի նման, որ մոցած էր ինքզինքը կարծես սրբազն իր պատգամին մեջ: Կզրուցեր դժվար հավատալի բաներու մասին, խատությամբ ու հավատքով, գրավելով ուշադրությունը խորմրված ունկնդիրներուն:

«Հիսուս որ խաչվեցավ Պիդասոսի հրամանով, Պատերի նախօրյակին, ուրիշ մեկը չէր՝ բայց խոստացված Մեսիան: Խաչվողը հարություն առավ մեռելներեն և հայտնիվեցավ մեզի բռնորդի, իր աշակերտներուն և հետևողդներուն: Անոր դեմքը նման էր մարդու մը՝ որ անցած էր մահեն, բայց կմնար կենդանի: Անմարմին մտածում մը կամ տեսիլք մը չէր ան, ծնունդ մեր երևակայության, որպեսզի անոր տալ ուզեկինք մարդին ու ձայն, վերածելու զինքը սեփական գոյացության մը: Երեք տարիներ իրեն հետ եղանք, լսեցինք իր խոսքերը և վկաներ եղանք իր հրաշալի գործերուն: Ան գերագույն իրողությունն է բոլոր ժամանակներուն, բոցավառ լեռ գիշերվան մեջ, գարունը մեր օրերու խոսումին, երշանկության ավետարերը, որ մարդոց համերիպեցավ անոնց վշտի ճամբաներուն վրա՝ իր տառապանքի բարձունքնեն, խաչեն, բանալով ճամբան մեր փրկության: Սիրեց բոլոր մարդերը անստիր և հրավիրեց զանոնք խմելու իր հոգիի հնձամեն երկնքի զմայեցուիչ զինին: Անիկա մեզի հետ էր, բայց նաև մեզմեն անդին, երկրի վրա և երկնքի մեջ: Ի զարման բոլորին, իր ըսածները հաստատելու համար մեշքերումներ կրներ սաղմոսներեն և մարգարեներեն, որոնք կնախաձայնեին Մեսիաին գալուստը: Ունկնդիրներուն մեջ կային երուսաղեմացիներ և արտասահմանեն եկողներ, որոնցմեն շատեր տակավին կիշեին Գալիլիացի Վարդապետին ողբերգությունը, որ Պատերի տոնը վերածեր էր արյունոտ հանդեսի մը:

— Բնավ լավա՞ծ է որ մարդ մը մեռելնե-

րեն հարություն առած վլա», Բեգնախատն կքրթմնջեին Սաղուկեցիները, արհամարհանքով դիտելու վերջ խոսողն ու իր շուրջները: «Այս անմիտները պետք է վտարվին տաճարի հրապարակեն, չպղտորելու համար ժողովորդին մաքուր հավատքը»:

— Իրենց հարության հավատքին համար չէ որ պետք է քշվին այս սրբազն վայրեն», կիարենին Փարիսեցիները, «այլ անոր համար որ խաչված մը իբրև Մեսիա կդավանին. որովհետև գրված է, անիծյալ ոլլա ան՝ որ փայտեն կկախվի»:

Ամրոխին մեջ կեցած էր նաև երիտասարդ մը, առծվեքիթ, շողարձակ նայվածքով, կարճահասակ բայց հաստապինդ, որ կեռար իր զայրությեն: «Հրեաներ», կգոռար ան, «այս մարդերը մոլորեցուցիչներ են, և հայիոյող ճշմարտության, որովհետև Աստուծն օծյալ կրավաճին մեկը որ խաչին վրա մեռած է»: Բոլորը այս վերջինին կնային: «Սողոս Տարտնացին է», կըսեր բովի Փարիսեցին իր ընկերոջը, «հոս աշակերտելու եկած է նշանավոր Ռաբի Գամադինին»:

Տպավորությունը սակայն սահմոկեցուցիչ էր, ունկնդիրներու մտքի և հոգիի ածովսերուն վրա կթափին կայծեր, կրակե լեզուներու ձևով: Խոսողն ու իր շուրջիները կրպեին ըլլալ կարծես խորհրդավոր եակեցեր, որոնց վրա հանգած էր Սատոծն հոգին: Դուրսեն եկող Հրեաները մանավանդ, ճնշումի տակն էին եղած հայտնության: Ուրիշներ, երազուն և մտախոր, կզգային թե երկինքը նորեն կրացվեր իրենց գլուխություն վերև, և Մեսիան, որուն մասին կիսուեր Գալիլիացի ձկնորսը, կեցած երկնքի մուտքին՝ կիրավիրեր բոլորը իր նոր արքայության:

— Մեսիա մը որ խաչվելեն և թաղվելեն հետո, հարություն առեր է մեռելներեն» կը քրթմնջեր Սողոս: «Ո՞ր սրբած են ասոնք այս բոլորը. հավանաբար հեթանոսներեն, որովհետև Քանանացիներուն Աստուծն և Բարեկացիներուն բեկ Մարդուկը մեռնելեն վերջ կյանքի վերադարձ կնկատվին զիրենք պաշտոններեն: Մյուս կողմեն սակայն այս եղկելիները իրենց ըսածը կիաստատին մարգարեներու հախաձայնություններով: Եսայիին բառերը կարծես իրենց մեռած Մեսիային համար գրված ըլլային: Խորայելի հույսը, Օծյալ Մեսիան, ան որ պիտի գա ամպերու վրայեն, շրջապատված երկնային ուժերով, որ պիտի հնձեւ բոլոր ազգերը և որաներու հման պիտի սփռեն իր ուտքերուն առջն, ընտրյալը, որ Աստուծն հետ էր ատեղծագործնեն առաջ, խաչվին հեթանոսներեն, առանց իրեն օգնության կանչելու երկնային գորքերը: Սակայն որ-

բան կպատշաճեին Մարգարեին խոսքերը ըսկածներուն, ի՞նչ հրեշալին զուգադիպություն» կխորհրդածեր Սողոս, ու չեր կրտար մոծում մը գունել այս տիամ հանելովիկն:

Սողոս այս մոծումներուն մեջ էր, երբ ուսին զգաց հապում իր երիտասարդ Բարձրաբար բարեկամին: Այս վերջինը բարձրահասակ էր և վայելչագեղ, թարմ մորուրով և գանգոր մազերով, որոնք կհորինեին պասկը իր դեմքին:

— Սողոս», ըսալ ան բաղցրորեն, «ուշ սիտի մեսանք առավան դամախոսութենեն»:

— Երավունք ունիս, սիրելի բարեկամ, Գալիխացի այս ճամարտակները գողցան մեր ժամանակը»: Երկու բարեկամները ուղղվեցան դեպի ժողովատեղին, որ կգրտնըվեր Դավթի թերդին քովը:

## 2

Սողոս Տարսունեն Երուսաղեմ եկած էր ուսանելու օրենքը, ճշմարիտ ճամբան բարեպաշտության: Խոկ Բարձրաբար կիսպատճեալ: Խոկ Բարձրաբար կիսպատճեալ իր գալակն էր, նոյն նապատակով և. Քաղաք եկած: Երկուրը էլ ծնած էին ներանու աշխարհի և միշտավարի մեջ, սակայն նապար՝ որ կաշակերտեին մեծահոչակ Գամատիելի:

Ճամախոսության նյութը, այդ օրվան, նիմիւլած էր մարդոց վարը ու բարքին, բաղված Շարիի մեծ հայր Հիլելի խոսքենեն, որոնց վրա ուսուցապես իրեն հաստուկ մեկնություններ և լուսաբնություններ ավելցուցած էր:

Գամադիել թերթ կազմիածքով սակայն պատկանելի երևոյթով մարդ մըն էր: Գըլիուն ուներ ու ապարոշ, որուն ճոթերը կիշնեին ուսերեն վար. խոկ խնամված մոլուքը կերկարեր մինչև գոտին: Երբ սիպար նարայիւացի, իր ցեղին երազներով և հոյսերով կօրորվեր: Օրենքը և լավագույն ապագայի մը երազը ամեն բան էին իրեն համար: Իր նախահայրերու եփած հացը և պատրաստած գիճին գերագույն հաղորդությունն էր անցյալին:

Ճամախանդութենեն նետու երկու բարեկամները իրենց վերադարձի ճամբուն վրա հանդիպեցան խմբված Հրեաներու, որոնք զարմանքով կիսունեն տաճարի գավիթին մեջ իրենց լածներուն մասին: Գալիխացիները մտածումներու իրական հեղափոխություն մը հարուցեր էին սիրտերու մեջ. կայծ մը պիտի բավեր որ Երուսաղեմը բռնկեր նոր բոցէ մը:

— Կըե՞ս» ըսալ Սողոսը իր ընկերոց, «ահա՝ ինչ որ այդ թշվառականները կիործեն ընել, անոնք ապականությունն կցանեն Խորարելի այգիին մեջ. պետք է արմատակի ընել այդ չարագործները»:

— Սակայն Գալիխացի այդ ձկնորսները իրենց ըսածները կմիմնեին մեր մարգարեներու ուսուցումին վրա», հարեց Բարձրաբարա: «Անոնք չեն մերժեր Խորարելի Աստվածը, ընդհակառակն կհրավիրեին ժողովորդ ապաշխարանի, պատրաստվելու գալիք մեծ օրվան: Իրենց ըսածները իրանալությունները ըլլային կարծես ենայի Մարգարեի համար ըսլած»:

— Եսրավելի հույսը, Օծյալ Մեսիան, ըլլանեկը որ նախառովի և խաչվի», առանց ցոյց տապու իր ուժը», պոտրկաց Սողոս, շեշտավի նայելով իր ընկերոց դեմքին:

— Եթե բախանձերը Տիրոց իմաստությանք են», հարեց Բարձրաբարա, «մենք շտուռ վկաներ կրնանք ըլլա կարևոր դեպքերու Աստված էք Ժինովը տունին, ի զոր կագեցին գործալությունները»:

Սողոսին համար ամրմունելի էին այս խոսքերը: Երկու անձեր կային իր մեջ, տիրապետելու մնայուն պայքարով՝ նեսան Հակոբին և ենալին, իրենց մորը արգանդին մեջ: Իր մանկությունն ու պատանությունը անցած էր Տարսոն, շալագործ նորը համաստ հարկին տակ: Իր գիտակցության առաջին օրեն, կզար թե ինքը կղզիաբանակ մըն էր ապականություն հորդող հեթանու օվկիանոսին մեջ: Մինամուլիին կից եղող դպրոցեն ստացավ իր նախանական կրթությունը, ծանրթացավ իր ժողովուրդի պատմության, օրենքին, Հնգամատայանին, և մարդարեանական գործերուն:

Սողոսի դորին բռնկող միտքը՝ խորապես ազդված էր մարգարեանական հալունություններին և իր մոծումը, իրականութենեն անդին, կծփար գեղեցիկ մոտապատկերներու շուրերուն վրա, որոնց այիքները իրեն կրերեն տափելներ քաղցր և հաղթապան, իրենց փառքին ցորքը սփելով իր դեմքին: Կզար թե մոտ էր օրը իր ցեղի նոգնադես ազատության, և Մեսիայի գլուխյան:

## 3

Տարսոն սովորական քաղաք մը չեր այդ օրերուն, այլ Հոռոմեական կայսրության բարգավաճ ոստաններն մին, շողշողուն գոհարի մը պես նատած Տավրոսան լեռներու շորին: Կյութնու գետին շուրերը, ձյուներն գոյացած, կկապեին Փոքր Ասին այս քաղաքը Միջերկրականին: Առևտոր Եգիպտոսն, Ասորիքն և հունական կղզիներն, արևեստներ, լեզուներ, կրոններ, ալլագան և խալտարդես, հմաստափառական դրաբուցներ, Հոռոմեական լեզեններ և աշխարհի բոլոր անկյուններն եկող օտարականներ կվերածեին զայն միջազգային ոստանի մը, հավասար Անտիոքի և Աղեքսանդրին: Հա-

րըստության, հաճուքի և մտքի կեդրոն մը ըլլալեն զատ, Տարտոն կվայելեր պաշտպանությունը Հոռոմի, և իր առանձնաշնորհյալ բնակիչները, Պոմպեոսի և Կեսարի օրերեն սկսյալ, ունեին քաղաքացիության իրավունքը: Սակայն աննվաճախ ցոփությունը Արեւելքի, լուծված հուն նորք ապականության, կվերածեին Տարտոն անբարդության մեծ կեդրոնի մը:

Հելլեններ, որոնց արյունը խառնված էր տեղացի ժողովուրդներու արյունին, կտրապետեն: Անոնցմեն վերջ իրենց թիվովն ու ազդեցությամբ կոգային Հրեանները, բերված հոն, մեծավ մասամբ, Անտիոքոս Եպիփանի օրերեն: Սողոսի ազգատոհմը վերջն եկածներեն էր, շատ ավանդության՝ Գայլիային: Ան ինքաննքը կնկատեր Բենիամինի ցեղեն և իր Սողոս անունը կածանցեր Խորայելի առաջին թագավոր Սավոյի անունն, որ Բենիամինի ցեղեն էր: Սողոսի հայրը ծանոթ անձնավորություն մըն էր Տարտոնի մեջ և ուներ քաղաքացիության առանձնաշնորհումը, որ կտրվեր միայն անոնց, որոնք ազդեցիկ էին կամ հարուստ: Սողոս իր ծնունդեն ուներ այդ իրավունքը, որ շատ օգտակար պիտի ըլլար իրեն իր առաքելության ընթացքին: Հունարենը իր երկրորդ լեզուն էր, որուն շնորհիվ հաղորդ եղավ Հելլեն գրականության և ժամանակի տիրող գաղափարներուն:

Մեծ իդա մը ուներ Երուսաղեմ երթալու, խմելու հրեական մշակույթը իր մաքոր աղբյուրեն, առ ոստ Հիլելի դպրոցին պետ՝ մեծանուն Ռաբի Գամալիելի: Իր այդ փափաքը շոտով իրականացավ: Իրեն համար Երուսաղեմ ապրիլը դժվար չէր որովհետու հոն ուներ ամուսնացած քուր մը և ազգականներ:

Աստուծուն սերը և Խորայելի փրկության հավատքը զուգ խարույկներու նման կայ-

րեին իր մերսը: Հավատքը ամեն օր ապրող իրականություն մըն էր իրեն համար: Ապառողջ էր ֆիզիքապիս, ենթակա քանի մը հիվանդություններու: Բակառակ այս իրողության խտակյաց էր: «Աստված սիրածները կտառապեցնեն», կրսեր, «նեղությունները Տիրոջ պարզներն են սուրբերու տրված»: Կուզեր իր գոյության բուրգին հիմերը երկնիքն մեջ հաստատել, զայն բարձրացնելու բաղանքը կոչնչացներ իր մեջ աշխարհիկ բոլոր տեսները: «Սուրբերը կատարյալ են», կրսեր, «որովհետոն ճիզ ըրած են մեռնելու երկրավոր ամեն բաղանքի համար, կեդրոնացնելով իրենց բովանդակ էությունը Աստուծունց»: Հիլելի դպրոցը կիրահանգեր հոգ տանի առողջության, և ծանր ուստերով չխաղալ սուրբերուն նմանելու խաղը, որ կրնար առաջնորդել եւթական հպարտության: իսկ հպարտությունը սուրբին համար նման էր խնձորին մեջ հնկող որդին: Գամալիելի խրատն էր իր աշակերտներուն, երիտասարդ ամուսնանալ և ունենալ արհեստ մը, որպեսզի ծերության՝ կողովին մեջ հաց ունենային: Սողոս ուներ իր գրադումը, իսկ իր կինը հավիտենական կույսն էր՝ Աստուծուն Օրենքը:

Իր արհեստին բերումով, իբրև վրանագործ, հարաբերության մեջ էր հասարակ ժողովուրդին հետ: Կյանքը կճանչնար ոչ թե տեսություններեն, այլ մարդոց հետ ունեցած շփումներեն: Իր աշքին առջև էին ամեն օր խեղճ մարդեր և կիներ, առյնիսկ երեխաներ, որոնք կրաշխեին իրենց ժամանակը, անձը և ուժը՝ կտոր մը հացի փոխարեն, և շատ հաճախ չէին գտներ զայն: Այդ խեղճերուն միակ հույսը Մեսիան էր, որ օր մը պիտի կանչեր զիրենք հատուցման:

(«Հեթանոսաց Առաքյալը», Երուսաղեմ, տպարան Ա. Հակոբյանց, 1975 թ., էջ 7—18)

